ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան « » ---------- 2026թ.

«Երևանի հենակետային պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ քոլեջ) ի դեմս տնօրենի, որը գործում է քոլեջի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և _____ (*ազգանուն, անուն, հայրանուն, հասցե*)_____, մյուս կողմից (այսուհետ՝ ուսանող), և ուսանողի օրինական ներկայացուցիչ, ի դեմս _____(*ազգանուն, անուն, հայրանուն*) (այսուհետ՝ օրինական ներկայացուցիչ), մյուս կողմից (քոլեջը, ուսանողը և օրինական ներկայացուցիչը միասին այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Ուսանողը հանդիսանում է քոլեջի _____մասնագիտության (որակավորումը_____) _____կուրսի_____խմբի վճարովի/անվճար *(ընդգծել)* համակարգի ուսանող, և սույն պայմանագիրը կնքվում է քոլեջի կողմից ուսանողի ուսումնառության գործընթացի կազմակերպման ու մասնագիտացման, ուսանողի կողմից քոլեջի կանոնադրության ու ներքին կարգապահական կանոնների պահպանման հետ կապված հարաբերությունների կարգավորման նպատակով:

1.2. Քոլեջում ուսանողի ուսումնառության տևողությունը _____ բաժնում կազմում է _____տարի:

2. Պայմանագրի հիմնական պայմանները

2.1. Ուսանողի ուսումնառության գործընթացը կազմակերպվում է առկա ուսուցման ձևով՝ 1-ին տարում ք. Երևան, Կորյուն 10 հասցեում գտնվող քոլեջի ուսումնական մասնաշենքում, ինչպես նաև ՀՀ բուժպրոֆիլակտիկ հիմնարկներում, քոլեջի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող այլ կազմակերպություններում, իսկ հետագա տարիների ընթացքում՝ Բուռնազյան 143 հասցեում:

2.2. Հաջորդ կուրսերում ուսանողի ուսումնառության ձևը (վճարովի, անվճար) որոշվում է քոլեջի կոլեգիալ կառավարման մարմնի (խորհրդի) նիստում, յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում (նախորդող և հաջորդող երկու շաբաթվա ընթացքում), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023թ. օգոստոսի 24-ի № 1449-Ն որոշմամբ սահմանված կարգը:

2.3. Հարգելի պատճառով (առողջական վիճակի պատճառով կամ հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի նպատակային արձակուրդում գտնվելու կամ ժամկետային զինծառայության զորակոչվելու դեպքերում) ուսումնական հաստատությունից ազատված ուսանողը ուսումը շարունակում է նույն մասնագիտությամբ՝ քոլեջ վերադառնալու օրվան հաջորդող այն կիսամյակից և կրթական ծրագրի այն փուլից, որտեղից ուսումն անավարտ է թողել: Այդ դեպքում կնքվում է նոր պայմանագիր, որի պայմանները ուսանողի համար չեն կարող լինել նվազ բարենպաստ, քան նախորդ պայմանագրի պայմաններն էին, ընդ որում ուսման վարձը սահմանվում է տվյալ ուսանողի հետ կնքված սկզբնական ուսումնառության պայմանագրով նախատեսված վարձավճարի չափով:

2.4. Սույն պայմանագրի 2.3 կետում չնախատեսված անհարգելի պատճառներով ուսումնական հաստատությունից ազատված ուսանողի հետ նոր պայմանագիր կնքելու դեպքում ուսման վարձը սահմանվում է տվյալ ուսումնական տարվա համար սահմանված չափով:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Քոլեջն իրավունք ունի.

3.1.1. պահանջել ուսանողից ունենալու բարձր առաջադիմություն և ենթարկվելու քոլեջի ներքին կարգապահական կանոններին.

3.1.2.ուսանողի նկատմամբ կիրառել նյութական և բարոյական խրախուսման միջոցներ գերազանց առաջադիմության և հասարակական ակտիվության համար.

3.1.3. ուսանողի նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ քոլեջի գույքը փչացնելու կամ ոչ պատշաճ օգտագործելու համար.

3.1.4. ուսանողին հեռացնել քոլեջից ուսման անբավարար առաջադիմության և ցածր կարգապահության համար.

3.1.5.ուսումնական գործընթացն իրականացնել հեռավար եղանակով տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

3.2 Քոլեջը պարտավոր է.

3.2.1. կազմակերպել ուսանողի ուսուցումը ՀՀ կառավարության կողմից հաստատված պետական կրթական չափորոշիչներին, քոլեջի կողմից հաստատված ուսումնական պլանին և սահմանված կարգով հաստատված առարկայական/մոդուլային ծրագրերին համապատասխան.

3.2.2. ուսումնառության համար ապահովել պատշաճ ուսումնական պայմաններ.

3.2.3. կազմակերպել ուսանողների գիտելիքների ընթացիկ և կիսամյակային ստուգումներ և քննություններ՝ քոլեջում սահմանված կարգին համապատասխան.

3.2.4. մրցութային կարգով փոխհատուցել ուսանողի ուսանողական նպաստը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով.

3.2.5. ուսանողի համար ստեղծել բոլոր հնարավորությունները գրադարանից, մարզական, մշակութային-լուսավորչական և այլ ծառայություններից օգտվելու համար.

3.2.6. ուսանողին և/կամ նրա օրինական ներկայացուցչին ծանոթացնել քոլեջի լիցենզիային և կանոնադրությանը, կնքվելիք պայմանագրին, պետական հավատարմագրման վկայականին, ներքին կանոնակարգերին, ինչպես նաև կրթության գործընթացը կանոնակարգող քոլեջի տնօրենի կողմից ընդունված իրավական ակտերին և որակավորման ծրագրի կազմակերպման մեթոդաբանությանն ու առանձնահատկություններին.

3.2.7. ուսումնառությունն ավարտած և պետական ամփոփիչ ատեստավորում անցած ուսանողին տրամադրել պետական նմուշի դիպլոմ:

3.3. Ուսանողն իրավունք ունի.
3.3.1. պահանջել քոլեջի ղեկավարությունից մասնագիտական ուսուցումը և ուսումնական գործընթացը կազմակերպել ակադեմիապես բարձր և պատշաճ մակարդակով.
3.3.2. մասնակցել քոլեջում կազմակերպվող գիտագործնական համաժողովներին, մշակութային միջոցառումներին, ուսանողական կոնֆերանսներին և մասնագիտական մրցույթ-ստուգատեսներին.
3.3.3 պաշտպանել ուսանողի իրավունքները և օրինական շահերը:

3.4. Ուսանողը պարտավոր է.
3.4.1. հաճախել ուսումնական պլանով նախատեսված բոլոր պարապմունքներին և սահմանված ժամկետներում կատարել ուսումնական գործընթացի ժամանակացույցով նախատեսված գործառույթները.
3.4.2. տիրապետել տվյալ մասնագիտության կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքներին և հմտություններին.
3.4.3. խստորեն պահպանել քոլեջի կանոնադրության պահանջները և ներքին կարգապահական կանոնները.
3.4.4. խնամքով և հոգատարությամբ վարվել քոլեջի գույքի հետ.
3.4.5.սովորելու ընթացքում դասաժամերից բացակայություններ ունենալու դեպքում լրացնել բաց թողած դասաժամերը՝ քոլեջի «Բացակա դասաժամերը լրացնելու կարգ»- ին համապատասխան.
3.4.6. քոլեջի վճարովի հիմունքով սովորող ուսանողը պարտավոր է անկանխիկ եղանակով քոլեջի հաշվարկային հաշվին փոխանցել տվյալ ուսումնական ժամանակահատվածի իր ուսումնառության համար սահմանված ուսման վարձը (մինչև 18 տարեկան ուսանողները ուսման վարձը վճարում են իրենց օրինական ներկայացուցչի միջոցով):

3.5. Մինչև 18 տարեկան ուսանողի օրինական ներկայացուցիչը պարտավոր է.
3.5.1. հետևել ուսանողի ուսման առաջադիմությանը.
3.5.2. հորդորել ուսանողին քոլեջի կանոնադրությունը և կարգապահական կանոնները խստորեն պահպանելու հարցում.
3.5.3. ուսանողի ուսման համար քոլեջի հաշվարկային հաշվին փոխանցել ուսանողի ուսման վարձը:

4. Վճարովի համակարգում սովորող ուսանողի ուսման վարձի վճարման կարգը և ժամկետները

4.1. Ուսանողի ուսման վարձի չափը սահմանվում է՝
ա) Ընդունելության մրցույթի արդյունքներով քոլեջի միջին մասնագիտական կրթության վճարովի համակարգ ընդունված ուսանողի համար յուրաքանչյուր ուսումնական տարվա համար 430 000_(_____) ՀՀ դրամ:
բ) «Հանրակրթական ծրագրով» բաժին ընդունված ուսանողի ուսման վարձի չափն առաջին կուրսում սահմանվում է 410 000(_____) ՀՀ դրամ, իսկ ուսումնառության հաջորդ կուրսերում ուսանողի ուսման վարձի չափը սահմանվում է իր կողմից ընտրած մասնագիևության համար՝ յուրաքանչյուր տարի 430.000 (_____) ՀՀ դրամ:
4.2. Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար ուսման վարձը պետք է վճարվի մինչև տվյալ ուսումնական տարվա սեպտեմբերի 30-ը ներառյալ: Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կարող են սահմանվել ուսման վարձի վճարման այլ ժամկետներ:
4.3.Ուսման վարձը չվճարած ուսանողին չի թույլատրվում մասնակցել քննաշրջանին, բացառությամբ այն դեպքերի, երբ ուսանողը գրավոր դիմումով պարտավորվել է ուսման վարձն ամբողջությամբ վճարել տվյալ տարվա ուսումնառության երկրորդ շրջանում, որի վերաբերյալ առկա է տնօրենի համաձայնությունը:

5. Պայմանագրի գործողության ժամկետը և վաղաժամկետ լուծման հիմքերը

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրելու օրվանից և գործում է ուսանողի՝ քոլեջում սովորելու ամբողջ ժամանակահատվածում: Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ:
5.2. Քոլեջի կողմից պայմանագիրը կարող է միակողմանի վաղաժամկետ լուծվել, եթե ուսանողը խախտել է սույն պայմանագրով սահմանված իր պարտավորությունները: Ուսանողի հեռացման վերաբերյալ քոլեջի տնօրենի հրամանը հիմք է սույն պայմանագիրը լուծելու համար:
5.3. Ուսանողի կողմից պայմանագիրը կարող է միակողմանի վաղաժամկետ լուծվել, եթե նա որոշել է ընդհատել ուսումնառությունը:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1. Ուսանողը և/կամ նրա օրինական ներկայացուցիչը հավաստում է, որ ծանոթացել է քոլեջի լիցենզիային և կանոնադրությանը, ներքին կանոնակարգերին, պետական հավատարմագրման վկայականին, կնքվելիք պայմանագրին, կրթության գործընթացը կանոնակարգող քոլեջի տնօրենի կողմից ընդունված իրավական ակտերին և որակավորման ծրագրի կազմակերպման մեթոդաբանությանն ու առանձնահատկություններին:
6.2. Կողմերի միջև ծագած վեճերը կարգավորվում են պայմանավորվող կողմերի փոխհամաձայնությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.3. Պայմանագրի լուծման դեպքում վճարված ուսման վարձը, որն ուղղվում է քոլեջի կանոնադրական խնդիրների իրականացմանը, ենթակա չէ վերադարձման:
6.4. Պայմանագիրը կազմված է 2 օրինակից, որոնք օժտված են հավասար իրավաբանական ուժով: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

7. Կողմերի հասցեները և ստորագրությունները

«Երևանի հենակետային պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ հասցե՝ ՀՀ, ք. Երևան 375009, Կորյունի 10 Տնօրեն՝_____	**Ուսանող** _____ *ազգանուն, անուն, հայրանուն* անձնագրի սերիա _____ տրված է «_____»_____ ում կողմից _____ հաշվառված է՝- _____ հանրային ծառայությունների համարանիշ _____ _____*ստորագրություն*	**Օրինական ներկայացուցիչ** _____ *ազգանուն, անուն, հայրանուն* անձնագրի սերիա _____ տրված է «_____»_____ ում կողմից _____ հաշվառված է՝_____ _____*ստորագրություն*